

## **Թունիսում դասընթացի հիմքում ընկած է մասնակցային խորհրդակցական ժողովրդավարությունը**

Ամառվա սկզբին՝ հուլիսի ամսվա վերջին, ALDA-ի գլխավոր քարտուղար Անտոնելլա Վալմորբիդան Սուսում ներկայացրեց «մասնակցային խորհրդակցական ժողովրդավարություն» վերապատրաստման երկրորդ մոդուլը Թունիսի Կայրուան և Մահդիա քաղաքների մասնակիցների համար: 2021թ. հոկտեմբերին ներկայացրած նախորդ մոդուլից հետո այս վերջին դասընթացին մասնակցեցին Կայրուանի և Մահդիայի քաղաքային խորհուրդների ընտրված պաշտոնյաները, երկու քաղաքապետարանների տեխնիկական անձնակազմը և քաղաքացիական հասարակության տեղական դերակատարները:

Դասընթացներն իրականացվեցին [AUTREMENT ծրագրի](#) շրջանակներում, որի նպատակն է աջակցել կարողությունների զարգացմանը՝ Թունիսի քաղաքապետարաններին տեղական կառավարման ուսուցում տրամադրելով: Ծրագիրը կենտրոնացած էր քաղաքացիների միջոցառումների կազմակերպման գործիքների տրամադրման վրա՝ որպես ուսումնասիրություն թիրախավորելով Ստրասբուրգի "Marché de Noel" -ը և Վիչենցայի "Festival Biblico"-ը:

**Քաղաքացիների ներգրավվածության խթանում մասնակցային խորհրդակցական ժողովրդավարության միջոցով**

Ավելին, տիկին Վալմորբիդան ներկայացրեց տարբերակներ, թե ինչպես ստեղծել անվտանգ միջավայր երկխոսության և փոխանակման համար տեղական քաղաքացիական հասարակության դերակատարների և ընտրված պաշտոնյաների միջև: Վարժությունների, հարցուպատասխանի նիստերի և բանավեճերի միջոցով քաղաքացիական հասարակության տեղական դերակատարները բարձրացրել են մի շարք առաջարկներ և մարտահրավերներ, որոնց նրանք սովորաբար հանդիպում են իրենց առօրյա ակտիվության մեջ՝ համագործակցելով տեղական իշխանությունների հետ: Նմանապես, ընտրված պաշտոնյաներին հաջողվել է պատասխանել հարցերին և ավելի շատ պատկերացում կազմել իրենց գործողությունները կարգավորող ընթացակարգերի վերաբերյալ:

Ուստի, հիմնվելով կոնկրետ և տեղական օրինակի վրա՝ դասընթացն ավարտվեց ճանապարհային քարտեզով այն քայլերի վերաբերյալ, որոնք պետք է ձեռնարկվեն ապագայում զարգացնելու այնպիսի միջոցառումներ, ինչպիսին է «The Mouled Festival»-ը:

Վերջինս սովորաբար տեղի է ունենում տոների ժամանակ, և այն նվիրված է իսլամի մարգարե Մուհամեդի տոնախմբությանը: Այսպիսով, Կայրուանի այս փառատոնը փոքր ձեռներեցների և ստեղծագործողների համար հնարավորություն է՝ ցուցադրելու քաղաքի մշակութային ժառանգությունը և նպաստելու տարածաշրջանի տնտեսական զարգացմանը:

Ընդհանուր առմամբ, մոդուլը լուծեց «The Mouled Festival»-ի հետ կապված բազմաթիվ առկախ հարցեր՝ միաժամանակ ընդգծելով մինչ այժմ AUTREMENT ծրագրի դրական ազդեցությունը: Հետևաբար, ինչպես ներկայացվել է դասընթացի ընթացքում, հիմնական և կարևոր դերակատարները պետք է խթանեն կիսվելու պահերը և փոխանակվեն փորձով Թունիսի լավագույն տեղական համայնքների հետ:

\*\*\*

AUTREMENT ծրագիրն անդրադառնում է քաղաքային կայուն շարժունակության և պլանավորման մարտահրավերներին Թունիսի Կայրուան և [Մահդիա](#) քաղաքներում: Դրա համար ծրագիրը նաև կենտրոնանում է երկու քաղաքների առաջնդման վրա՝ զարգացնելով քաղաքապետարանների և քաղաքացիական հասարակության դերակատարների կարողությունները միջոցառումների կազմակերպման և քաղաքացիների հետ երկխոսության միջոցով: